ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ **Գետահովիտի միջնակարգ դպրոց**

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները,գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում

Ուսուցիչ՝ Ա.Ավետիսյան

Վերապատրաստող-մենթոր՝ Ն. Ղազումյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ 1. ԳՆԱՀԱՏՈՒՄ,ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ----------4

Հայտորոշիչ գնահատում----------5

Ձևավորող գնահատում----------5

Ամփոփիչ գնահատում----------7

Միավորային գնահատում----------8

Բնութագրող գնահատում ----------10

1.2 Ձևավորող գնահատում----------12

1.3 Ձևավորող գնահատման բաղադրիչները----------12

1.4 Ձևավորող գնահատման 9 հնար----------15

Գլուխ 2.ԳԼՈՒԽ 2.ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2.1 Ձևավորող գնահատման 5 գաղափար----------22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------28

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման։

Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով[1]:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է երկու գլխից որոնք էլ բաժանվում եմ մի քանի ենթավերնագրերի:Աշխատանքը ավարտվում է եզրակացությամբ և գրականության ցանկով:Աշխատանքի մեջ ուսումնասիրել ենք գնահատումը , գնահատման տեսակները և գործիքները :

Հետազոտական աշխատանքի նպատակն է ստուգել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման մակարդակը, արժեքային որակների բացահայտումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործումն ու ուսուցման որակի վերահսկման ապահովումը: Գնահատման հիմնական սկզբունքներն են՝ արդարացիությունը, մատչելիությունը, օբյեկտիվությունը, թափանցիկությունը, հավաստիությունը:

Եկանք այն վերջնարդյունքին, որ նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Գլուխ 1.ԳՆԱՀԱՏՈՒՄ,ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.

2) բանավոր հարցում.

3) բաց հարցերով քննարկում.

4) այլ:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) տնային աշխատանք.

6) նախագծային աշխատանք.

7) քննարկում, բանավեճ.

8) այլ:

Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում՝ «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում՝ «-»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ.

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) նախագծային աշխատանք.

6) այլ:

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

Միավորը	Բնութագրիչները
1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:
2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:
6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով,

	կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:
10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը.

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել.

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը.

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը.

3) տեղեկատվության մտապահումը.

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը.

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան.

6) սովորողի ինքնուրույնությունը.

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործին [3]:

1.2 ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գոյություն ունեն գնահատման 3 փոխկապակցված տեսակներ՝ հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ:

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

1.3 ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձևավորող գնահատումն ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում (Գծակարգ):

Ուսման հանդեպ մոտիվացիայի բարձրացման նպատակով ապահովում սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

- Սովորողների կողմից ինքնագնահատման ունակության ձևավորում:
- Սովորողների կողմից փոխադարձ գնահատման ունակության ձևավ որում:
- Արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատմա ն արդյունքները:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման ձևերն ու հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի ձևերով և հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր տեսակների ու ձևերի հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը:

Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

Սովորողի գործուն ընդգրկվածությունը ենթադրում է.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

1.4 ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ 9 ՀՆԱՐ

Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները:

Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:

Ստորև ներկայացված են մի քանի հնարներ, որոնք կօգնեն սովորողներին և ուսուցիչներին՝ ձեռքբերումները, դժվարությունները ու բացթողումները բացահայտելու, անհրաժեշտ ճշգրտումներ անելու, առաջադրանքները հնարավորինս հասկանալի դարձնելու և անսխալ կատարելու համար: Այս հնարները լավ միջոց են նաև սովորողների ինքնուրույն աշխատանքը խթանելու, ինչպես նաև կազմակերպելու ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

«Ջերմաչափում»

Այս մեթոդը նպատակ ունի բացահայտելու, թե սովորողները որքանով ճիշտ են կատարում հանձնարարությունը: Աշխատանք կատարելու ընթացքում մի պահ դադար է տրվում. ուսուցիչը հարցնում է. «Ի՞նչի վրա էիք աշխատում»: Յուրաքանչյուր սովորող ներկայացնում է այն աշխատանքը, ինչը ինքը մինչ այդ պահը կատարել է: Պարզ է դառնում, թե սովորողները որքանով են հասկացել հանձնարարությունը կամ դրա կատարման ընթացքը: Զույգերով կամ խմբերով աշխատելու պարագայում ուսուցիչը դիմում է որևէ զույգի կամ խմբի՝ ասելով, որ ցուցադրեն իրենց աշխատանքի ընթացքը: Մյուս զույգերը կամ խմբերը դիտում են և հասկանում, թե իրենցից ինչ է պահանջվում կատարել:Այս մեթոդը շատ կարևոր է, քանի որ փորձը ցույց է տվել, որ սովորողների մեծ մասը առաջադրանքը կատարելիս դժվարություններ է ունենում ոչ թե այն պատճառով, որ թեման չգիտի, այլ չի հասկանում առաջադրանքի պահանջը, ուսուցչի հրահանգը կամ կատարման ընթացքը: Խորհուրդ է տրվում

հաճախակի կիրառել այս հնարը, որը ժամանակատար չէ և նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

«Հարցադարան»

Հարցադարանը ներառում է մի շարք հարցադրումներ, որոնք դասի ժամանակ ուղղվում են այս կամ այն սովորողին կամ սովորողների որոշակի խմբին և օգնում են ուսուցիչներին որոշել, թե որ գիտելիքը կամ հասկացությունը չյուրացվեց սովորողների կողմից: Կիրառվում են հարցադրման մի շարք տարբերակներ, հատկապես ընդարձակ պատասխաններ պահանջող՝ սովորողներից անհրաժեշտ տեղեկություն ստանալու նպատակով:

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի սեղանին դրվում է քարտ՝ հետևյալ հարցերով.

- Ի՞նչ նոր բան այսօր իմացաք:
- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:

Վերջում, ուսումնասիրելով քարտերը, ուսուցիչը համապատասխան եզրահանգումներ է անում:



«Գիտելիքների բուրգ»

Դասի ժամանակ՝ նոր նյութի համատեղ ուսումնասիրությունից հետո, ուսուցիչը սովորողներին առաջարկում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ կարող են անել դասի տվյալ փուլում: Այդ նպատակով յուրաքանչյուր սովորող թղթի վրա պատկերում

է բուրգ՝ ուսուցչի տված օրինակով, բուրգի ամեն մի հատվածում գրում է նախադասություններ, որոնց միջոցով արտահայտում է տվյալ թեմային վերաբերող իր գիտելիքները, օրինակ՝ դրանք կարող են լինել հետաքրքիր փաստեր, օգտակար տեղեկություններ, ինքնատիպ առաջադրանքներ, դրական հույզեր:



Ապա այդ թղթերը կախում են դասարանի պատին: Բոլոր սովորողները հերթով մոտենում են թղթերին և կարդում գրածները: Վերջում անդրադառնում են գրված մտքերին, խմբավորում և ամփոփում:

«Ադամանդների հիերարխիան»

Սովորողները քարտի կամ կպչուն թղթերի վրա մշակում կամ նախապես գրի են առնում տվյալ դասի թեմայի շուրջ 9 գաղափար: Սովորողները քարտերը դասավորում են վերևից ներքև ըստ կարևորության՝ հետևյալ սկզբունքով. 1-ին տողում ընտրում և փակցնում են 1 քարտ, 2-րդ տողում փակցնում են 2 քարտ, 3-րդ տողում՝ 3 քարտ, 4-րդ տողում՝ 2 քարտ և 5-րդ տողում՝ 1 քարտ:



Քարտերը ստանում են ադամանդի տեսք և դասավորվում ըստ գաղափարների առաջնահերթության: Աշխատանքը կարող է իրականացվել անհատական, զույգով կամ խմբով:

«Խմբագրական խորհուրդ»

Շարադրության խմբագրման ժամանակ ուսուցիչը նախապես գրատախտակի վրա գրում է չափանիշները: Բոլոր սովորողները հանդես են գալիս որպես խմբագրողներ, իսկ սովորողներից մեկն իր ցանկությամբ գնում է գրատախտակի մոտ՝ ստանձնելով իր գրած շարադրության ներկայացնողի դերը: Խմբագրողներն ուշադիր լսում են գրավոր շարադրանքը և հենվելով գրատախտակի վրա նշված չափանիշների վրա՝ նշում են սովորողի աշխատանքի արժանիքները և առաջարկություններ են անում՝ շարադրության բովանդակությունը բարելավելու համար: Երբ սովորողը լսում է խմբագրողների առաջարկությունները, նստում է և ուղղումներ կատարում իր աշխատանքում: Սա սովորողներին շարադրություն գրելուն նախապատրաստելու շատ հարմար միջոց է:

«Արտաքին և ներքին շրջաններ»

Սովորողները կազմում են 2 շրջան՝ արտաքին և և ներքին, այնուհետև կանգնում են դեմ - դիմաց և ուսումնասիրվող թեմայից միմյանց հարցեր են ուղղում: Հարցերի պատասխանը ստանալուց հետո արտաքին շրջանի

սովորողները տեղափոխվում են ժամսլաքի ուղղությամբ, կազմում նոր զույգեր և կրկին միմյանց հարցեր ուղղում:

Այդ ընթացքում ուսուցիչը դիտարկումներ է անում և նշում սովորողների թյուրընկալումներն ու դժվարությունները՝ հետագայում դրանց անդրադառնալու և շտկումներ կատարելու համար:

«Չորս անկյուններ»

Թեմայի քննարկումից առաջ ուսուցիչը դասարանի անկյուններում փակցնում է նախապես պատրաստված 4 ցուցանակներ.

Անկյուն 1. Լիովին համաձայն եմ:

Անկյուն 2. Համաձայն եմ:

Անկյուն 3. Համաձայն չեմ:

Անկյուն 4. Բացարձակապես համաձայն չեմ:

Ուսուցիչը սովորողներներին ասում է, որ թեմայի շրջանակում հնչեցնելու է պնդումներ կամ տեսակետներ: Լսելուն պես սովորողները ծանր ու թեթև են անում հնչեցված պնդման հանդեպ իրենց վերաբերմունքն ու տեղավորվում են դասարանի չորս անկյուններում՝ ըստ թեմայի կամ մտքերի նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքի: Այնուհետև ուսուցիչը հնչեցնում է մյուս պնդումը կամ

տեսակետը, սովորողները կրկին լսում են և տեղավորվում են ըստ իրենց վերաբերմունքի համապատասխան անկյունում: Ուսուցիչը առաջարկում է քննարկել թեմայի շրջանակում հնչած տեսակետները, իսկ սովորողները հիմնավորում են իրենց ընտրությունը: Քննարկման արդյունքում նրանք կարող են փոխել անկյունը: Ցուցանակները կարող են պահվել կրկին այլ թեմաներում կիրառելու համար:

«Երեք բոպեանոց դադար»

Այս հնարքը սովորողներին հնարավորություն է տալիս կանգ առնելու, խորհելու նոր նյութին առնչվող մտքերի, հասկացությունների շուրջ: Դադարն օգնում է նոր նյութը կապել նախորդ նյութերից ստացած գիտելիքների և փորձառության հետ: Սովորողներին առաջարկվում են հետևյալ արտահայտությունները.

- ✓ Ես փոխեցի իմ վերբերմունքը …
- ✓ Ինձ հայտնի դարձավ, որ …
- ✓ Ես զարմացա …
- ✓ Ես զգացի, որ …
- ✓ Ես հաստատեցի կապ …

«Ելքի քարտեր»

Ելքի քարտերի միջոցով դասի ավարտին հավաքագրվում են սովորողների պատասխանները: Հիմնվելով պատասխանների վրա՝ ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը, որպեսզի առանձնացնի և անդրադառնա չյուրացված հասկացություններին, գաղափարներին:

Ելքի քարտերի օրինակներ՝

1. Նշի՛ր 3 բան, որ սովորեցիր այսօր:
2. Նշի՛ր 2 բան, որ հետաքրքրեց քեզ:
3. Նշի՛ր 1 բան, որ մնաց անհասկանալի:

Երբեմն դասի սկզբում, երբ ուսուցիչը ցանկանում է հասկանալ, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասից, կիրառվում են մուտքի քարտեր:

Մուտքի քարտի օրինակ՝

1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան, որ կարևորում ես:
3. Նշի՛ր 1 բան, որին կուզենայիր այս դասին կրկին անդրադառնալ:

ԳԼՈՒԽ 2.ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2.1 ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ 5 ԳԱՂԱՓԱՐ

Ինչպես գիտենք, ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:
Ձևավորող գնահատում իրականացնելիս անհրաժեշտ է վերհանել սովորողների կարիքները.

• Յուրացրե՞լ են թեման, թե՞ ոչ:
• Կարելի՞ է արդյոք անցնել մյուս բաժինն ուսումնասիրելուն:
• Ո՞վ ունի լրացուցիչ օգնության կարիք:
• Ի՞նչը պետք է փոխել կամ վերանայել դասի պլանավորման և դասավանդման մեթոդիկայում:
Ձևավորող գնահատման գործիքները բազմազան են, և ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է կիրառել նպատակային և հետևողականորեն: Կարելի է սկսել ձևավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներից:

Գաղափար 1. Արդյունավետ սկիզբ և ավարտ

Կարևոր է դասի համար ապահովել արդյունավետ սկիզբ և ավարտ՝ օգտագործելով
առաջին և վերջին 5 րոպեները: Տալիս ենք հարցեր անցած թեմայից կամ կիրառում կարճ հարցաշար: Ընդ որում, եթե էլեկտրոնային ռեսուրսները բավարար չեն, կարելի է խնդրել սովորողներին փոքրիկ թղթիկների վրա գրել յուրացրած և ոչ այնքան լավ յուրացրած հարցերը, գաղափարները և գցել երկու տարբերակված արկղիկների մեջ: Սա կօգնի հստակեցնել թեմայի յուրացման ամբողջական պատկերը:

Իսկ եթե հնարավորություն կա օգտագործելու **Google Forms, Poll Everywhere, Edulastic** հարթակները, ժամանակի մեծ տնտեսում կլինի:

Դասի ավարտին սովորողները կարող են «3-2-1» մեթոդով անդրադառնալ իրենց

աշխատանքին և ձեռքբերումներին, նշելով՝ 3 բան, որ յուրացրել են, 2 բան, որոնց մասին կուզեին ավելին իմանալ և 1 բան, որ չեն հասկացել:

Ապա սովորողները կարող են շրջել սենյակում և ծանոթանալ միմյանց նշումներին,լրացումներ կատարել իրենց թերթիկներում:

Կարելի է նաև սովորողներին առաջարկել ինքնագնահատման հարց՝ «Ի՞նչը ես այլ կերպ կանեի հաջորդ դասին»:

Գաղափար 2. Նվազ ազդեցություն ունեցող թեստեր

Թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս և օգնում է լավ հասկանալ սովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների և գաղափարների յուրացումը:

Կան հավելվածներ, օրինակ՝ **Zipgrade-ը** (https://www.zipgrade.com/), որոնց օգնությամբ կարելի է արագ դուրս բերել թեստային թերթիկները և կիրառել: Նվազ ազդեցության թեստերի կիրառումը հարմար է նրանով, որ դրանց արդյունքները չեն ազդում կիսամյակի գնահատականի ձևավորման վրա, այլ յուրաքանչյուր սովորողի համար բացահայտում են, թե թեմայի իմացության ինչ մակարդակ ունեն տվյալ պահին:

Գաղափար 3. «Մեծ եղբայրդ հետևում է քեզ»

Ուսումնառության արդյունքները կարող են հեշտ չափելի լինել, անգամ եթե սովորողներին նման առաջադրանքներ են տրվում.

• Ընկերոջդ նամա՛կ գրիր, որում բացատրում ես անցած թեմայի հիմնական գաղափարները:

• Նկարի՛ր պատկեր, որը ակնառու կդարձնի թեման:

• Մտածի՛ր նյութի շուրջ և հետո քննարկի՛ր ընկերոջդ հետ:

Ուսուցիչը շրջում է դասարանում, նշումներ է անում կամ լրացնում է նախապես

պատրաստած դիտարկման թերթիկը, որն ավելի հարմար է և հնարավորություն է տալիս ավելի նեղացնելու սովորողներին ուսումնասիրելու դիտանկյունը և կատարել արդյունավետ գրառումներ:

Գաղափար 4. Ձևաչափը՝ հարցազրույց

Որպեսզի սովորողներն ավելի խորանան ուսումնասիրվող թեմայի մեջ, կարելի է օգտագործել հարցազրույցի, բանավեճի և քննարկման ձևաչափերը: Կարելի է կազմակերպել նաև 3-րոպեանոց անհատական հարցազրույցներ սովորողների հետ: Սրա համար կարիք կլինի շատ ժամանակ ծախսել, սակայն հարկ չկա հարցազրույց անցկացնել բոլոր թեմաների և նախագծերի ժամանակ:

Որպես այլընտրանք՝ կարելի է սովորողներին բաժանել զույգերի և տալ հետադարձ կապի տարբերակ.

• Ասել ընկերոջը, թե ինչն իրեն դուր եկավ նրա ելույթում:

• Տալ մեկ հարց եւ պարզաբանել, թե ինչպես կարելի է բարելավել պատասխանը: Ինքնամփոփ սովորողների համար կարելի է օգտագործել **Flipgrid, Explain Everything,** կամ **Seesaw**, հավելվածը, որը հնարավորություն կտա պատասխանները գրել նախապես:



Գաղափար 5. Արվեստ

Այն միջոցները, որոնք նախատեսում են դիտազննական ռեսուրսների շուրջ աշխատանք, նույնպես կարող են ձևավորող գնահատման գործիքներ դառնալ:

Սովորողները կարող են նկարել, կոլաժներ և քանդակներ ստեղծել, ինչը նրանց հնարավորություն կտա միավորել անցած նյութը մեկ ամբողջության մեջ: Նրանք կարող են բեմականացում ներկայացնել որևէ գրական թեմայով կամ անգամ պարով ցուցադրել բջիջների բաժանումը, ծաղկի բացվելը, բույսերի ծլելը և այլն:

Ձևավորող գնահատման գործիքները տարբեր են, և յուրաքանչյուր դասավանդող կարող է ընտրել իրեն և իր դասարանին առավել հարմարը: Կարևորն այն է, որ ձևավորող գնահատումը բարձրացնի յուրաքանչյուր սովորողի՝ իր իսկ ձեռքբերումների, առաջընթացի գիտակցումը, իսկ դասավանդողին հնարավորություն տա ժամանակին փոխելու ուսուցման ընթացքը, հասկանալու սովորողների կարիքները՝ ամփոփիչ գնահատմանը ավելի պատրաստ դարձնելու համար:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով հետազոտական աշխատանքը եկանք հետևյալ եզրահանգումներին .

- Կրթական արդյունքների գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:
- Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:
- Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:
- Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները:
- Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-11/2b2703c1568910a9c680b2ab7a6e30a5.pdf
2. https://kznakgnahatum.blogspot.com/p/5.html
3. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760